ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
14 ՀՈՒԼԻՍԻ 2021թ.
ԹԻՎ 22–Ն

## Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-127-0038 –Ի3 ԱՆՋԱՏՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅՓՈՍՏ ՊՓԲԸ ՇԵՆՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 0.04307 հա ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ն. Գետաշեն համայնքապետարանի շենքը և այդ շենքում գտնվող <Հայփոստ> ՊՓԲԸ պատկանող շինությունը հին կառույց են և չի պահպանվել շենք շինության նախագծային և հողհատկացման փաստաթղթերը: Համայնքապետարանի սեփականության իրավունքի վկայականի ձեռք բերման նպատակով անհրաժեշտ է կատարել հողհատկացում:

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման մասին՝՝ ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին 2016թ դեկտեմբերի 16-ի ՀՕ 237-Ն օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Կենտրոն թաղ. 5փող.7հասցեում գտնվող համայնքապետարանի շենքի և այդ շենքում գտնվող <<Հայփոստ>> ՊՓԲԸ շինության պահպանության և սպասակման նպատակով հատկացնել 05-066-127-0038 կադաստրային ծածկագրից անջատված 0.04307հա համայնքային սեփականության հողամաս, որից
   ա/ Համայնքապետարանը հողամասի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերում իր բաժնեմասի չափով՝0.04071 հա:
   բ/ <<Հայփոստ>> ՊՓԲԸ հողամասի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերում իր բաժնեմասի չափով՝ 0.00236հա
   գ/ Համայնքապետարանի 1-ին հարկի 4.55քմ միջանցքը թողնել ընդհանուր օգտագործման:
2. Հողամասի նպատակային նշանակությունը համարել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական:

կողմ- 8 , ձեռնպահ-0, դեմ-0;

1. Ստեփանյան Նվեր
2. Արսենյան Արտակ
3. Ահարոնյան Սումբատ
4. Գորանցյան Սպարտակ
5. Բարբառյան Խաչիկ
6. Ղազարյան Սամվել
7. Կիրակոսյան Վազգեն
8. Գևորգյան Գագիկ

Համայնքի ղեկավար Կ. Գևորգյան